ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 20.09.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/66

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի

Մասնակցությամբ՝ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ՝

Ա. Պարանյանի (լիազորագիր, տրված՝ 10.09.2019թ.)

քննելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար համակարգիչների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/052» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի շրջանակներում «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից 11.09.2019թ. ներկայացված (11.09.2019թ. վարույթ ընդունված) բողոքը (հետայսու նաև՝ ԳԲՔԱ-ՆԳ-2019/66 բողոք), պարզեցի հետևյալը.

1. <u>«Կոմպմարկետ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.</u>

«Կոմպմարկետ» ՍՊԸ-ն (հետայսու նաև՝ Ընկերություն) 11.09.2019թ. ներկայացրած բողոքով հայտնել է հետևյալը.

«Կոմպմարկետ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար համակարգիչների ձեռքբերման նպատակով հայտարարված «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/052» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին (հետայսու նաև՝ Ընթացակարգ):

«Կոմպմարկետ» ՍՊԸ-ի ամբողջ հայտում, այդ թվում նաև՝ մասնակցության դիմումում, որպես գնանշման հարցման ընթացակարգի ծածկագիր նշված է ճիշտ՝ «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/052»:

«Կոմպմարկետ» ՍՊԸ-ի գնային առաջարկի աջ անկյունում որպես Հավելված 2 գնանշման հարցման ընթացակարգի ծածկագիր նշված է ճիշտ ծածկագիր՝ «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/052»:

«Կոմպմարկետ» ՍՊԸ-ի գնային առաջարկ Հավելված 2-ի տեքստում նշված է՝ ուսումնասիրելով «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/62» ծածկագրով գնանշման հարցման հրավերը….:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.09.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում հայտնաբերվել է անհամապատասխանություն, մասնավորապես՝ ներկայացված գնային առաջարկում ընթացակարգի ծածկագիրը նշված է սխալ:

Նույն արձանագրության 2-րդ կետով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 40-րդ կետի 4-րդ ենթակետը, մերժել է «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 3-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում:

Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ցանկացած անձ, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, ունի գնման գործընթացին մասնակցելու հավասար իրավունք:

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և տառերով և թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին,

գ. մասնակցի գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված:

Ընթացակարգի մասնակից «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտի փաթեթում առկա թե՛ Հավելված 1-ում՝ մասնակցության դիմումում և թե՛ Հավելված 2-ում՝ գնային առաջարկում, Ընթացակարգի ծածկագիրը նշված է ճիշտ, այն է՝ «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/052», սակայն գնային առաջարկ Հավելված 2-ում, բացի «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/052» ծածկագրից, պատահաբար տեքստի մեջ նշվել է նաև՝ «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/69»:

Այնուհետև, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.09.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրության 1-ին կետով գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրվել է, որ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում հայտնաբերվել է անհամապատասխանություն, մասնավորապես՝ ներկայացված գնային առաջարկում ընթացակարգի ծածկագիրը նշված է սխալ և հենց նույն արձանագրության 2-րդ կետով էլ՝ գնահատող հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետը մերժել է «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը:

Ընկերությունը գտնում է, որ այս պարագայում, երբ բոլոր հավելվածներում Ընթացակարգի ծածկագիրը ճիշտ է նշված /«ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/052»/, այդ թվում նաև գնային առաջարկում, Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը իրավունք չուներ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի հայտը մերժելու՝ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում ընթացակարգի ծածկագիրը սխալ նշելու հիմքով, քանի որ Հավելված 2 ծածկագիրը ճիշտ է նշված և միայն գնային առաջարկում ներառվող տեքստի մեջ է պատահաբար նշվել մեկ այլ ընթացակարգի ծածկագիր:

Հավելված 2
«ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/052» ծածկագրով
գնանշման հարցման հրավերի

ԳՆԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

Ուսումնասիրելով «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/69» ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը _____ -ն առաջարկում է
մասնակցի անվանումը
պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով.

Վերոհիշյալը հիմնավորվում է նաև այն փաստով, որ Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետը սահմանում է մասնակցի ներկայացրած գնային առաջարկում հնարավոր անհամապատասխանությունների հնարավոր դեպքերը, որոնց պարագայում մասնակցի հայտը ենթակա չէ մերժման և հաշվի առնելով, որ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացրած Հավելված 2-ում առկա տեխնիկական վրիպակը կապված չէ բուն գնային առաջարկի՝ հաշվարկի հետ, ուստի Ընկերությունը գտնում է նման տեխնիկական վրիպակը հիմք չէր մասնակցի հայտը մերժելու համար:

Նման տեխնիկական վրիպակի հիմքով, որն անվավեր չի դարձնում ներկայացված գնային առաջարկը, մերժվել է ավելի էժան գին ներկայացրած «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի հայտը, ինչի արդյունքում պետությունը ստիպված է լինելու պայմանագիր կնքել հաջորդ տեղ զբաղեցնող և ավելի բարձր գնային առաջարկ ներկայացրած մասնակցի հետ:

Գրեթե նմանատիպ գործ քննվել է նաև գնումների հետ կապված բողոքներ քննող անձի վարույթում /ԳԲՔԱ-ՆԳ-2019/56/, որտեղ Ընկերության հայտը մերժել էր, քանի որ գնային առաջարկում «Տերմինալ Պլյուս» ՍՊԸ-ի փոխարեն նշվել է «Տերմիալ Պլյուս» ՍՊԸ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի կողմից թիվ ԳԲՔԱ-ՆԳ-2019/56 ծածկագրով բողոքի վերաբերյալ 29.08.2019թ. կայացրած որոշմամբ բողոքներ քննող անձն արձանագրել է, որ «Տերմինալ-Պլյոա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ոչ միայն գնային առաջարկի, այլ նաև հայտով ներկայացված բոլոր փաստաթղթերի վրա առկա է Ընկերության ռուսերեն լեզվով կնիքը, որի վրա նշված է ՕՕՕ «Терминал-Плюс», իսկ մասնակցության հայտի թիվ 1 Հավելվածում նշված է նաև Ընկերության հարկ վճարողի հաշվառման համարը ....: Դրա հետ մեկտեղ, ամփոփելով վերը նշված փաստերը, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը գտել է, որ «Տերմինալ-Պլյոա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում մասնակցի անվան մեջ «ն» տառի բացակայությունը չի կարող դիտարկվել էական վրիպակ վերջինիս հայտը մերրելու համար:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձն իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,

բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման:

Ընկերությունը բողոքով խնդրել է պարտավորեցնել «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/052» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել 04.09.2019թ. տեղի ունեցած նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացրած որոշումը՝ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը մերժելու վերաբերյալ:

«Կոմպմարկետ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 16.09.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով պնդել է բողոքով ներկայացված դիրքորոշումը:

<u>2. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված դիրքորոշումը և հիմնավորումները.</u>

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված 13.09.2019թ. թիվ 1/18-2/55428-2019 գրությամբ հայտնել է հետևյալը.

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի (հետայսու նաև՝ Պատվիրատու) կողմից կազմակերպված «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/052» ծածկագրով գնանշման հարցմանը մասնակցելու համար հայտ է ներկայացրել «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն, որն արձանագրված է գնահատող հանձնաժողովի (հետայսու նաև՝ Հանձնաժողով) թիվ 3 արձանագրությամբ:

Ընկերության կողմից ներկայացված հայտի Հավելված 2-ում (Գնային առաջարկ) ընթացակարգի ծածկագիրը սխալ է նշված, որի համար Ընկերության հայտը մերժվել է:

Պատվիրատուն հայտնել է, որ և՛հրավերում, և՛ ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի «Գնումների կազմակերպման» կարգը հաստատելու մասին որոշման 32-րդ կետի 2-րդ ենթակետում նշվում է, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը:

Մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և՛ տառերով, և՛ թվերով կամ միայն տառերով.

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին.

գ. մասնակցի գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված:

Հաշվի առնելով վերոգրյալը Ընկերության կողմից ներկայացված հայտում բացակայում է վերոնշյալ բացառություններից որևիցե մեկը, ուստի հայտը ենթակա էր մերժման:

Միաժամանակ Պատվիրատուն հայտնել է, որ Ընթացակարգի հրապարակված հրավերի Գնային առաջարկում բոլոր ծածկագրերը քարտուղարի կողմից ճիշտ էին լրացված:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, պատշաճ ծանուցված լինելով բողոքի քննության նպատակով 16.09.2019թ. ժամը 10:00-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. ԳԲՔԱ-ՆԳ-2019/66 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ԳԲՔԱ-ՆԳ-2019/66 բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/052» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.09.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է այն հիմքով, որ վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկում ընթացակարգի ծածկագիրը սխալ է նշված:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից 11.09.2019թ. ներկայացված բողոքը, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 13.09.2019թ. թիվ 1/18-2/55428-2019 գրությունը՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 30-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ հայտը ներառում է մասնակցի հաստատած գնային առաջարկը:

Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից իր կարիքների համար հայտարարվել է «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/052» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ:

Ընթացակարգի հրավերի ՄԱՍ Ի-ի 7-րդ կետի 7.2 ենթակետով սահմանվել է, որ բավարար են գնահատվում սույն հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են: Ընդ որում հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը կամ գնային առաջարկը ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն:

Ընկերությունը մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով ներկայացրել է գնային առաջարկ հետևյալ տեսքով՝

«Հավելված 2

«ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/052» ծածկագրով

գնանշման հարցման հրավերի

Գ Ն Ա Յ Ի Ն Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

Ուսումնասիրելով **ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/69** ծածկագրով գնանշման հարցման հրավերը, այդ թվում կնքվելիք պայմանագրի նախագիծը, «Կոմպմարկետ» ՍՊԸ-ն առաջարկում է պայմանագիրը կատարել ներքոհիշյալ ընդհանուր գներով...»

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.09.2019թ. նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված որոշմամբ Ընկերության հայտը մերժվել է այն հիմքով, որ վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկում ընթացակարգի ծածկագիրը սխալ է նշված:

Այսպիսով՝ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում նշված Ընթացակարգի երկու ծածկագրերից մեկը Ընթացակարգի «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/052» ծածկագրի փոխարեն նշվել է այլ ընթացակարգի ծածկագիր՝ «ԳՀԱՊՁԲ-ԱԻՆ-19/69»:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի համաձայն՝ սույն օրենքի նպատակն է ապահովել գնումների գործընթացում հատուցման դիմաց արժեք, այն է՝

1) պատվիրատուին վերապահված լիազորությունների կատարման համար անհրաժեշտ՝ կարիքին համապատասխան ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերում՝ համարժեք հատուցմամբ.

2) գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում:

2. Գնումների գործընթացը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա.

1) գնման գործընթացի միասնական կանոններով մրցակցային, թափանցիկ, համաչափ, հրապարակային և ոչ խտրական հիմունքներով կազմակերպում.

2) պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնում և նրանց միջև մրցակցության խրախուսում.

3) ցանկացած անձի համար, անկախ նրա օտարերկրյա ֆիզիկական անձ, կազմակերպություն կամ քաղաքացիություն չունեցող անձ լինելու հանգամանքից, գնման գործընթացին մասնակցելու իրավահավասարություն:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը սահմանում է, որ հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան:

Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն

ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման: Ընդ որում, մասնակցի հայտը ենթակա չէ մերժման, եթե՝

ա. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակները լրացված են միայն թվերով, իսկ ընդհանուր գնի սյունակը՝ և տառերով և թվերով կամ միայն տառերով,

բ. գնային առաջարկի արժեք և ավելացված արժեքի հարկ սյունակներում տառերով կամ թվերով նշված գումարների միջև առկա է անհամապատասխանություն, սակայն տառերով կամ թվերով նշված գումարներից որևէ մեկի հանրագումարը համապատասխանում է ընդհանուր գնի սյունակում տառերով նշված գումարին.

գ. մասնակցի գնային առաջարկում չափաբաժնի համարը սխալ է նշված, սակայն գնման առարկայի անվանումը ճիշտ է լրացված:

Այսպիսով՝ չնայած այն հանգամանքին, որ Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետը և 41-րդ կետը սահմանում են, որ հրավերի պահանջներին անհամապատասխան ներկայացված գնային առաջարկն առանց շտկելու հնարավորության ենթակա է մերժման, այնուամենայնիվ, Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետը սահմանում է այն բացառությունները, որոնց առկայության պայմաններում մասնակցի գնային առաջարկն ենթակա չէ մերժման:

Ուսումնասիրելով «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի գնային առաջարկը և դրանում տեղ գտած վրիպակը, ինչպես նաև հիմք ընդունելով գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացման անհրաժեշտությունը, պայմանագրի կնքման նպատակով մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման սկզբունքը՝ գտնում եմ, որ չնայած այն հանգամանքին, որ Ընկերության գնային առաջարկում ընթացակարգի ծածկագրերից մեկը սխալ է նշվել, այնուամենայնիվ նշված վրիպակի էական չլինելու պատճառով Ընկերության գնային առաջարկը պետք է գնահատվի բավարար, հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ նույն հավելվածում նշվել է նաև Ընթացակարգի ճիշտ ծածկագիրը:

Այսպիսով՝ հաշվի առնելով վերոգրյալը, գտնում եմ, որ «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի բողոքը հիմնավոր է և ենթակա է բավարարման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝

ՈՐՈՇԵՑԻ

«Կոմպմարկետ» ՍՊԸ-ի կողմից 11.09.2019թ. ներկայացված բողոքը բավարարել՝ պարտավորեցնել «ՊԵԿ-ԳՀԱՊՁԲ-19/052» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել «Կոմպմարկետ» ՍՊԸ-ի հայտը մերժելու վերաբերյալ որոշումը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**